Ամալյա Կոստանյան
(1960-2010)

Ամալյա Կոստանյանը ծնվել է 1960 թ. մարտի 10-ին, Երևանում: Լինելով գիտնական և ԵՊՀ-ի շրջանավարտ կենսաֆիզիկոսի դիպլոմով (1981 թ.)՝ նա ստացել է կենսաբանական գիտությունների թեկնածուի աստիճան ԵՊՀ-ում (1990 թ.) և աշխատել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտում (1984-1996թ.թ.): 1996 թ. նա ավարտել է Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ)՝ ստանալով քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների մագիստրոսի կոչում: Նա ներգրավված է եղել ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության, Միավորված ազգերի կազմակերպության, ՏԱՍԻՍ-ի ծրագրերի իրականացման մեջ, ինչպես նաև հետազոտական աշխատանք է կատարել ՀԱՀ-ում: 1998 թ. ԱՄՆ Տեղեկատվական գործակալության Էդմունդ Մասքի մրցանակին արժանանալով՝ նա սովորել է ԱՄՆ Դյուքի համալսարանի Թերի Սանֆորդի անվան քաղաքական հետազոտությունների դպրոցում, որտեղ ստացել է Միջազգային զարգացման քաղաքականության մագիստրոսի կոչում (2000 թ.):

2000 թ. հուլիսին արևմուտքում կրթություն ստացած իր համախոհ ընկերների հետ, ովքեր մեծ ցանկություն ունեին իրենց ավանդը ներդնել Հայաստանի քաղաքական, տնտեսական և սոցիալական բարեփոխումների գործում, Ամալյա Կոստանյանը հիմնադրել է Տարածաշրջանային զարգացման կենտրոն հասարակական կազմակերպությունը: Արդյունավետ կառավարմանն ուղղված իր ակտիվ ջանքերի շնորհիվ մեկ տարվա ընթացքում՝ 2001 թ. հոկտեմբերին կազմակերպությունը հավատարմագրվել է Թրանսփարենսի Ինթերնեշնլ (ԹԻ) գլոբալ հակակոռուպցիոն շարժման կողմից որպես ազգային ներկայացուցչություն: 2008 թ. փետրվարին կազմակերպությունը վերագրանցվել է որպես Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն (ԹԻՀԿ): ԹԻՀԿ-ը ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կոալիցիայի անդամ է 2008-ից ի վեր:

Ամալյա Կոստանյանը եղել է ԹԻՀԿ նախագահ մինչև 2010 թ. սեպտեմբերին իր հանկարծահաս մահը:

Էդմունդ Մասքի ծրագրի 10-ամյակին նվիրված միջոցառմանը ԱՄՆ Պետական դեպարտամենտը Ամալյա Կոստանյանին շնորհվել է Հայաստանից Մասքի ծրագրին մասնակցած առավել ակնառու շրջանավարտի կոչում՝ Կովկասյան տարածաշրջանում ՀԿ-ների զարգացման գործում իր ակտիվ ներդրման համար (2002 թ.):

2008-ից Ամալյա Կոստանյանը եղել է Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության խորհրդի նախագահ և Հայաստանի հելսինկյան կոմիտեի խորհրդի անդամ: Գործընկերները նրան բնութագրում են որպես «լավ առաջնորդ և աջակից, մարդու իրավունքների խիզախ պաշտպան, ում ոգին, բարձր ինտելեկտը, հումորը և էներգիան նրանց ոգեշնչել ու առաջնորդել է դժվարին պահերին»:

Ամալյա Կոստանյանն իր ներդրումն է ունեցել Հայաստանին վերաբերող մի շարք զեկույցներում: Նա ԹԻՀԿ-ի կողմից հրապարակված 17 գրքերի հեղինակ ու համահեղինակ է:

2010 թ. նոյեմբերի 7-9 Բանգկոկում տեղի ունեցած Թրանսփարենսի Ինթերնեշնլի տարեկան ընդհանուր ժողովը որոշել է սահմանել Ամալյա Կոստանյանի անվան մրցանակ, որը շնորհվելու էր ԹԻ հակակոռուպցիոն շարժման գերազանց գործունեության համար:

Նա հետմահու արժանացել է ԱՄՆ դեսպանության «Խիզախ կին» մրցանակին՝ հաշվետու և թափանցիկ կառավարման խթանմանը, կոռուպցիայի դեմ պայքարին և քաղաքացիական հասարակության ներգրավվածության ամրապնդմանն ուղղված իր տասնամյա գործունեության համար:

ԹԻՀԿ-ը և Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան կազմակերպությունը սահմանել են Ամալյա Կոստանյանի անվան ամենամյա մրցանակ, որը շնորհվելու է Հայաստանում հակակոռուպցիոն գործունեության մեջ նշանակալի դերակատարում ունեցող և/կամ սկզբունքային, ազնիվ ու անշահախնդիր քաղաքացիական ակտիվություն ցուցաբերած անձանց/գործիչներին: